[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.		Ա	4751931837
[4] Մատակարարման ամսաթիվ					
10	Դեկտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար			

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)	
[7.1] ՀԴՄ կտրոնի համար	

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծառայությունների չափը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	32101218 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.3	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354 (անունը, ազգանունը)

Ստացող՝ (ստորագրություն) (անունը, ազգանունը)

(պաշտոն) (ստորագրություն) (անունը, ազգանունը)

10/12/2018 15:23:41

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

ք.Գորիս

09 հոկտեմբերի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Սևակ Արզումանյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 32101218 քրեական գործի նյութերը,

պ ա ր զ ե ց ի՝

2018թ. հունիսի 15-ին՝ ժամը 11:50-ին, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ոստիկանության Գորիսի բաժնում հաղորդում է ստացվել՝ անչափահաս Շահանե Շադունցի դին հիվանդանոց ընդունելու մասին, որտեղ վերջինիս հարազատները նշել են, որ երեխան կախվելու միջոցով ինքնասպան է եղել:

Դեպքի առթիվ 2018թ. հունիսի 15-ին Գորիսի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 32101218 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Պարզվել է, որ 14 ամյա Շահանե Ալիկի Շադունցն ընտանիքի՝ ծնողների՝ Ալիկ Շադունցի և Սիրանուշ Սահակյանի հետ բնակվել է Գորիս քաղաքի Ավանգարդ 5-րդ թաղամասի 12-րդ շենքի 3-րդ բնակարանում: Սովորել է Գորիսի 5-րդ հիմնական դպրոցի 9-րդ դասարանում: Դպրոցում ունեցել է լավ առաջադիմություն, ունեցել է բավարար գիտելիքներ, հատկապես հումանիտար առարկաներից՝ գրականություն, պատմություն, աշխարհագրություն: Բնագիտական առարկաներից փոքր ինչ թերացել է: Վերջինս «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» և «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունների հաշվառումներով չի անցել: Շահանե Շադունցը եղել է կոյս: Մտերմություն է արել համադասարանցիներ Ժասմին Թանգյանի և Եվա Մկրտչյանի հետ: Շահանե Շադունցը եղել է խաչապաշտ, Աստծո նկատմամբ հավատքով լի, հաճախակի է այցելել Գորիս քաղաքի «Թանգու ձոր» կոչվող թաղամասին հարակից գերեզմանոցների տարածքում գտնվող «Խաչ» անվանյալ տարածք, որտեղ աղոթել է, զբաղվել տեղանքի մաքրությամբ: Եղել է աշխույժ, կենսուրախ, գաղտնապահ: Հիշյալ սրբատեղիի հարևանությամբ գտնվել է անդունդ: Շահանե Շադունցը համացանցի «www.facebook.com» սոցիալական կայքում ունեցել է «Շ.Շահանե» և «Anun Anun» անվամբ անհատական էջեր, վերջինիս փոխկապակցված «Messenger» հավելված: Շահանե Շադունցի մայրը խստապահանջ է եղել դստեր նկատմամբ, հատկապես կենցաղային մաքրության հարցում, արգելել է դասերից հետո տևական ժամանակ բացակայել տնից: Երբեմն զայրացել է նրա վրա:

2018թ. փետրվար կամ մարտ ամիսներին «Messenger» հավելվածի միջոցով Շահանե Շադունցը նամակագրական կապ է հաստատել համաքաղաքացի Գարուն Հակոբջանյանի հետ: Դրանից հետո Շահանե Շադունցը սիրահարվել է Գարուն Հակոբջանյանին, նրա նկատմամբ ունեցած իր զգացմունքները շարադրել է անձնական օրագրում, սակայն Գարուն Հակոբջանյանի կողմից փոխադարձ վերաբերմունք չի ստացել, սերը եղել է անպատասխան:

2018թ. գարնան սկզբերին Շահանե Շադունցը «Շ.Շահանե» անհատական էջի անվանումը փոխել է «Շահանե Խաչատրյան» պայմանական անվամբ՝ մեկնաբանելով, որ սիրել է հիշյալ ազգանունը: Դրանից որոշակի ժամանակ անց նրա ծնողները տեղեկացել են ազգանունը փոփոխելու մասին, որի պատճառով մայրը զանգել է դպրոցում գտնվող Շահանե Շադունցին ու բարկացել, պահանջել բացատրություն: Շահանե Շադունցն ազդվելով մոր խոսքից՝ դպրոցից Եվա Մկրտչյանի հետ գնացել են դեպի գերեզմանոցներ տանող ճանապարհի ուղղությամբ, որտեղ հանդիպել են Ժասմին Թանգյանին ու գնացել «Խաչ» կոչվող տեղանք: Շահանե Շադունցը քիչ հետո գնացել է անդունդի ուղղությամբ և ասել, որ ցանկանում է կյանքին վերջ տալ: Նրան խոչընդոտել է Ժասմին Թանգյանը: Այնուհետև Սիրանուշ Սահակյանի զանգից հետո Շահանե Շադունցը Եվա Մկրտչյանի ուղեկցությամբ գնացել է տուն, իսկ մինչ այդ սոցիալական կայքից ջնջել է հիշյալ էջը: 2018թ. ապրիլին Շահանե Շադունցի հայրն ունեցած հիվանդության պատճառով ընկել է կոմայի մեջ և բուժման նպատակով տեղափոխվել է Երևանի «Սուրբ Գր.Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Հոր

առողջական վիճակի հետ կապված մտահոգվել է Շահանե Շաղունցը, որն իր ազդեցությունն է թողել երեխայի տրամադրության վրա:

2018թ. հունիսի սկզբերին Շահանե Շաղունցը նամակագրական և հեռախոսային կապի մեջ է գտնվել համաքաղաքացի, Երևան քաղաքում բնակվող Դերենիկ Ղևոնդյանի հետ: Վերջինիս չի ասել դպրոցական լինելու մասին, հայտնել է, թե իբրև պետք է ընդունվի համալսարան: Թաքցրել է նաև տարիքը ու երբեմն ուղարկել է ոչ իրական՝ համացանցից ներբեռնված տարբեր աղջիկների պատկերներով լուսանկարներ:

2018թ. հունիսի 10-ին Շահանե Շաղունցի ընտանիքին հյուրընկալվել են վերջինիս մորեղբայր, Երևան քաղաքում բնակվող Գարիկ Սահակյանն ու նրա կինը՝ Շահանե Վարդազարյանը, մանկահասակ երեխայի հետ: Շահանե Վարդազարյանը նկատել է, որ Շահանե Շաղունցը հաճախ [illegible] է խոսում բջջային հեռախոսով: Վերջինիս հարցին, թե ում հետ է խոսում, ստել է՝ ասելով իբրև խոսում է Գարուն Հակոբջանյանի հետ: Այնուհետև Շահանե Շաղունցը նրան համակարգչի էկրանին ցուցադրել է Դերենիկ Ղևոնդյանի նկարը՝ հարցնելով, թե արդյոք սիրուն տղա է: Շահանե Վարդազարյանը տվել է բացասական պատասխան: Շահանե Շաղունցը Դերենիկ Ղևոնդյանին բնութագրել է որպես զգաց[illegible] չտի անձնավորություն: Դրանից հետո Շահանե Շաղունցը մորեղբոր կնոջը հարցրել է վերջին[illegible] հեռախոսից որոնումների պատմությունները ջնջելու կարգը, այնուհետև հունիսի 13-ին [illegible] ընթացքում Շահանե Վարդազարյանն անընդհատ լսել է իր հեռախոսի «Messenger» հավելվ[illegible] հաղորդագրությունների ստացման ազդանշանները: Նույն օրը՝ ժամը 22-ի սահմաններում, Շա[illegible] Վարդազարյանը, նայելով հիշյալ հավելվածը, հայտնաբերել է Շահանե Շաղունցի և Դե[illegible] Ղևոնդյանի միջև տեղի ունեցած նամակագրությունը և վերջինիս կողմից Շահանե Շաղ[illegible] ուղարկված չընթերցված հաղորդագրությունները: Դրանից հասկացել է, որ Շահանե Շաղունց[illegible] հեռախոսի միջոցով նամակագրական կապի մեջ է եղել Դերենիկ Ղևոնդյանի հետ: Կարդ[illegible] հաղորդագրությունները՝ հասկացել է, որ Շահանե Շաղունցը սիրահարական բ[illegible] հաղորդագրություններ է գրել ու ստացել Դերենիկ Ղևոնդյանից, ով հանդիպացել է այն նույն տղա[illegible] մասին Շահանե Շաղունցը նախօրեին իրենից կարծիք է հարցրել: Հաղորդագրությունների հա[illegible] Դերենիկ Ղևոնդյանը եղել է ամուսնացած, ապրել է կնոջ հետ, իսկ Շահանե Շաղունցը, [illegible] գիտակցելով այդ մասին, շփվել է նրա հետ, ասել է ուսանող լինելու մասին: Նրանք դեռ չէին հան[illegible] միմյանց միջև հարաբերություններ չի եղել:

2018թ. հունիսի 14-ի առավոտյան Շահանե Շաղունցը գնացել է դպրոց՝ հերթական քննու[illegible] մասնակցելու: Ժամը 11-ի սահմաններում Շահանե Վարդազարյանը Սիրանուշ Սահա[illegible] բացահայտել է վերջինիս դստեր ու Դերենիկ Ղևոնդյանի նամակագրական կապը ու ցույց [illegible] հաղորդագրությունները:

2018թ. հունիսի 14-ին՝ ժամը 13-ի սահմաններում, քննությունից հետո Շահանե Շաղունցը [illegible] փողոցում հանդիպել է Ժասմին Թանգյանին, որի հետ պայմանավորվել է հանձնած քննու[illegible] արդյունքում բարձր գնահատական ստանալու համար գնալ իրենց հյուր՝ սրճելու: Նույն ժամ[illegible] Շահանե Շաղունցին զանգել է մայրը և զայրացած պահանջել է գնալ խանութ: Շահանե Շա[illegible] միայնակ գնացել է խանութ, որտեղ մայրը նրանից բացատրություն է պահանջել Դերենիկ Ղևո[illegible] հետ շփվելու մասին, ապա փնովել է վերջինիս՝ շեշտելով նրա՝ նախկինում ամուսնալուծված [illegible] կրկին ամուսնանալու, տվյալ պահին ամուսնացած լինելու, տարիքով բավական մեծ [illegible] հանգամանքները, որից հետո արգելել է շարունակել նրա հետ շփումը: Շահանե Շաղունցը, [illegible] մոր խոսքերից, Դերենիկ Ղևոնդյանի հետ կապը բացահայտվելու հանգամանքից, աննկատ հե[illegible] խանութից և հուզված վիճակում քայլել է խաչի տարածք: Նախքան այնտեղ հասնելը՝ ճանապ[illegible] հանդիպել է Ժասմին Թանգյանին: Սիրանուշ Սահակյանը, նկատելով դստեր բացակայու[illegible] չգտնելով նրան տանը և մոտակայքում, անմիջապես Գարիկ Սահակյանի և Արման Շաղունց[illegible] գնացել է խաչի տարածքի ուղղությամբ: Վերջիններս Շահանե Շաղունցին հայտնաբերել են [illegible] տարածքում, ով հեռախոսով խոսել է Դերենիկ Ղևոնդյանի հետ, ապա այն նետել է [illegible] Հարազատները Շահանե Շաղունցին ստիպողաբար վերադարձրել են տուն: Շահանե Շա[illegible] հայտնել է, որ փախչելու համար է գնացել խաչի տարածք, ինքնասպանություն գործելու [illegible] ունեցել:

2018թ. հունիսի 14-ի երեկոյան Շահանե Շաղունցն իր ննջասենյակում անձնական օրագր[illegible] ձեռագրով գրել է հիշյալ թվական տվյալներով «14.2018թ. Վերջին անգամ» վերնագրով գրություն[illegible] մասնավորապես բառացի մեջբերել է.

«Կներեք ինձ, բայց արդյոք կներեք: Սա իմ վերջին խոսքն է քեզ համ: Դու գիտեիր իմ բոլոր-բոլոր նպատակները: Շփվելով Դերոի հետ, ես մեղք եմ գործել, բայց հասկացիր, որ իմ կյանքում դեռ չի եղել մեկ ուրիշը: Հասկանում եմ մեղավոր եմ, բայց անառակ չեմ, պատիժ էր, սա ինձ իմ կյանքի կողմից, ինչ արած, ասում եմ վերջին բառերս, ձեռքերս դողալով, իսկ խուլ լեզուս չորացել է, պապանձվել եմ, ուզում եմ մեռնել, բայց հանգիստ խղճով, ցավացնում եմ ձեզ, բայց ինչ արած չեմ կարող ապրել այսպես, բոլորն էլ սիրում են, նաև՝ սխալվում, դա իմ կյանքի մեջ միակ սխալն էր: Կյանքիս մեջ սիրել մեկին, մեռնում եմ իմ խղճի ու մտքի հանգստության համար, այլ ոչ թե ձեզ ցավացնելու համար: Կյանքիս մեջ չունեմ գաղտնիքներ՝ ինչ էլ կա դու գիտեիր, թող Աստված ինձ ների: Միակ մտահոգությունս Գարիկնա, խնդրում եմ համ կփոխանցես այս խոսքերը՝ որ քո մտածածի պես չեմ, կյանքիս մեջ մի դեպքա պտահալ, հիմա բոլորի հետ էլ կարա ինի, բայց անառակ, անբարո չեմ: Թող մեռնեմ, միևնույն է կտեսնեմ բոլոր բոլորիդ, կտեսնեմ ու երևի կփոշմանեմ, բայց ինչ արած, լավ է մեռնել, քան ձեր մտածածը ու զգացածը լսել: Ես վատ գիտելիքներ չունեմ, և ես հաստատ կհասնեի իմ նպատակին, իր, Դատավոր կդառնայի, ու նաև՝ որոշել էի պատգամավոր դառնալ, ա՛յ Գարիկը, որ ասում էր՝ «ես զարմանում եմ հորա էտ տարիքում քաղաքականություն եշում», այ հենց իմ նպատակների համար: Չգիտեմ էլ ինչ ասեմ, այնքան էլ տգեղ է ձեռագիրս, բայց ոչինչ, իմ վիճակի հետ անհամեմատելի է: Հազիվ հազ եմ կարողանում մտքերս արտահայտել: Մայրիկ դուք ինձ չէիք սիրում, բայց շնորհակալ եմ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ, որ այն ինչ ցանկացել եմ ունեցել եմ: Կներեք ջնջումների համար, շատ վատ եմ: Խնդրում եմ քեզ մայրիկ, տղա կբերես ու անունն էլ անպայման կդնես Արտուր: Միշտ երազել եմ Արտուրի մասին, մեր հրեշտակի: Երանի ձեր կողքին լինեի, գիտեմ տանջվում ես, բայց կգա երևի մի պահ, որ շնորհակալ կլինես, որ մեռել եմ, դե քանի որ դու ինձ չէիր սիրում: Ոչինչ քո մասին չեմ կարող ասել սառնացել եմ, քո կյանքում, քեզ հետ կապված կա մի գաղտնիք, որն ինձ հետ կտանեմ, հավերժ կպահեմ իմ սրտում: Ուզում եմ, որ իմ մահից հետո դու հանգիստ ապրես, և վստահ եմ, որ այդպես էլ կլինի, հավատա չեմ ուզում այս քայլով որևէ բան ապացուցել և ոչ էլ ունեմ մի այնպիսի սխալ գաղտնագողի քայլ, որ մահը միակ փրկությունը կլինի, չէ հավատա այդպես չէ, պարզապես ես հանուն պատվի պատրաստ եմ մեռնել, սխալ եմ գործել, բայց I անգամ, գիտեմ կներեիք, ամեն ինչ իր հունով կշարժվեր, բայց անկեղծ այսպես էր ճիշտը: Տղա կունենաս, կցանկանաս աղջիկ էլ, թող առողջ լինեն, թող ամենալավը լինեն ,,, Լավ եղեք, ինձ էլ կներեք...! »:

Դրանից հետո Շահանե Շադունցը ջնջել է Դերենիկ Ղևոնդյանի հետ ունեցած նամակագրությունը, իսկ «Շ.Շահանե» անհատական էջի անվանումը փոխել է «Դերո Ղևոնդյան» անվամբ:

2018թ. հունիսի 15-ի առավոտյան Շահանե Շադունցը գտնվել է իր ննջասենյակում: Գարիկ Սահակյանը գնացել է համալսարան, նրա կինը՝ Շահանե Վարդազարյանը, մանկահասակ երեխայի հետ գտնվել են իրենց ննջասենյակում, Սիրանուշ Սահակյանը զբաղվել է արտաքին տեսքի հարդարմամբ, իսկ Ալիկ Շադունցը եղել է քնած: Ժամը 10:37-ին Շահանե Վարդազարյանը հեռախոսով խոսել է Գարիկ Սահակյանի հետ, որի ընթացքում Շահանե Շադունցը զբաղեցրել է նրանց երեխային: Դրանից հետո Շահանե Վարդազարյանը գնացել է խոհանոց՝ երեխայի համար ուտելիք պատրաստելու՝ վերջինիս թողնելով Շահանե Շադունցի հետ: Մոտ 10 րոպե Շահանե Վարդազարյանը մնացել է խոհանոցում, որտեղ ժամը 10:40-ին հեռախոսով խոսել է մոր հետ: Վերադառնալուց հետո տեսել է, որ երեխան միայնակ է, իսկ Շահանե Շադունցը նրա մոտից բացակայում է: Սիրանուշ Սահակյանը ևս անտեղյակ է եղել դստեր գտնվելու տեղի մասին: Տան մուտքի մոտ Շահանե Վարդազարյանը կանչել է Շահանե Շադունցին, սակայն վերջինս չի արձագանքել: Սիրանուշ Սահակյանը ժամը 11:20-ի սահմաններում գնացել է խանութ՝ ասելով, որ հնարավոր է դուստրը գնացել է իր քրոջ՝ Հայկանուշ Սահակյանի տուն: Տվյալ ժամանակահատվածում վերջիններս չեն նկատել տան հարևանից նկուղային սենյակի մուտքի դռան բաց լինելու և ներսում Շահանե Շադունցի գտնվելու հանգամանքը, ով դեռևս չպարզված պատճառով հիշյալ նկուղային սենյակում էլեկտրական մետաղալարերի մալուխից հարմարեցված կտորե գոտիով կախվելու եղանակով ինքնասպան է եղել:

Շ.Շադունցի դիակը նույն օրը՝ ժամը 11:20-ի սահմաններում, կախված վիճակում հայտնաբերել է Շահանե Վարդազարյանը, ով նկուղային սենյակի դիմաց երեխային կերակրելու ժամանակ նկատել է մուտքի դռան բաց լինելը:

Դեպքի վայրի զննությամբ Շ.Շադունցի տանը շահագործվող «ASUS» ապրանքանիշի համակարգչի էկրանին տեղադրված է եղել խաչված Հիսուս Քրիստոսի՝ պարանոցից վերև պատկերը, ձախի ճակատային մասում կապված մեխերով փշալար, որից արնահոսել է արյան հետքեր: Համացանցի «Google» բրաուզերում առկա է եղել «www.facebook.com» սոցիալական կայքի «Anun Anun» պայմանական անվամբ անհատական էջի պատուհան: Զննությամբ պարզվել է նաև, որ Շ.Շադունցը 2018թ. ապրիլի դրությամբ ունեցել է «Շ.Շահանե» անվամբ անհատական էջ:

Շ.Շադունցի դիակի արտաքին զննությամբ հագուստների մեջ հայտնաբերվել են «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնն Մայր Աթոռ Ս.Էջմիածին Հայոց ազգային բանակի համար Աղոթք՝ Հոր» բովանդակությամբ աղոթքների հավաքածու, ինչպես նաև՝ Հիսուս Քրիստոսի խաչված սրբապատկեր:

Շահանե Շադունցի մտերիմ համադասարանցի Ժասմին Թանգյանը ցուցմունք է տվել, որ Սիրանուշ Սահակյանը եղել է խստապահանջ Շահանե Շադունցի նկատմամբ, քանի որ նա եղել է [illegible] եղեխան: Մայրը մշտապես դեմ է եղել դստեր կողմից հեռու տեղեր գնալուն, ուշ տուն վերադառնալուն: 2018թ-ին, ստույգ ամիսը և օրը չի հիշել, երբ դպրոցից միասին գնացել են նրանց տան ուղղությամբ, մայրը դուրս է եկել տան մուտքի մոտ և սաստիկ զայրացել է Շահանեի վրա՝ ասելով, թե ինչու է ուշացել, ապա մոտենալով՝ մեկ անգամ ձեռքի բաց ափով թեթևակի հարվածել է Շահանե Շադունցի ուսին՝ այդ ձևով արտահայտելով իր զայրույթը: Շ.Շադունցը հանդիսացել է համացանցի «www.facebook.com» սոցիալական կայքի օգտատեր, ունեցել է «Շ.Շահանե» անվամբ անհատական էջ, որը 2018թ. գարնան սկզբներին փոփոխել է «Շահանե Խաչատրյան» պայմանական անվամբ: Այնուհետև ջնջել է այդ էջը և գրանցել է «Anun Anun» պայմանական անվամբ անհատական էջը: Ինչ վերաբերել է «Խաչատրյան» ազգանունով հանդես գալուն, ապա այդ կապակցությամբ Շ.Շադունցը մեկնաբանել է, որ շատ է սիրել հիշյալ ազգանունը: Ասել է նաև, որ Խաչյան ազգանունը ավելի հարմար կարող է լինել: Դրանից որոշ ժամանակ հետո նրա ծնողները տեղեկացել են էջում ազգանունը փոփոխելու մասին ու բուռն պահանջել բացատրություն: Շ.Շադունցն այդ օրը դասերից հետո գնացել է դեպի գերեզմանատուն տանող ճանապարհի ուղղությամբ, որտեղ գտնվել է որպես սրբատեղի համարվող, «Խաչ» կոչվող տեղանքը, իսկ հարևանությամբ առկա է խոր անդունդ: Շահանեի հետ հաճախակի են այցելել նշված սրբատեղի, վառել մոմ, աղոթել: Նրա հետ եղել է համադասարանցի Եվա Մկրտչյանը: Նրա մայրը դուրս է եկել տանից ու տեսել, որ լացելով գնում է հիշյալ գերեզմանատան սրբատեղիի ուղղությամբ: Մոտեցել ու հարցրել է պատահածի մասին, փոխարենը Եվան պատասխանել է, որ Շահանեի [illegible] զանգել ու զայրացել է՝ կապված Խաչատրյան ազգանվան հետ: Շահանեն ասել է, որ ցանկանում է կյանքից հանգստանալ խաչում: Շ.Շադունցը քիչ նստելուց հետո ասել է, որ թողեն իրեն, ցանկանում է կյանքի վերջ տալ, ապա մոտեցել է անդունդի բերանին: Գնացել է նրա հետևից, բռնել ձեռքից ու հրելով՝ [illegible] գետնին, պահել նրան: Նա փորձել է վերկենալ ու ցած նետվել, սակայն չի թողել: Այդ պահին [illegible] ստացել մորից, պատասխանել է ինքը և ասել, որ գտնվում են խաչում, Շահանեն ուզում է ցած [illegible] Մայրը խոսել է դստեր հետ, ապա բարկացած կանչել է տուն: Շահանեն դրանից հետո հանգստացել և վերադարձել է տուն: Որոշակի ժամանակ անց, Շահանեն իրեն ասել է, որ մայրը [illegible] հասկացել է, ամեն ինչ հարթվել է, իսկ ինքը ջնջել է էջը: Դրանից օրեր անց, Շ.Շադունցի հայրն ու [illegible] հիվանդության պատճառով ընկել է կոմայի մեջ և բուժման նպատակով տեղափոխվել է Երևան քաղաք: Շահանեն ևս մի քանի օրով մեկնել է Երևան և ծնողներից շուտ վերադարձել է Գորիս, [illegible] մորաքրոջ ու տատի տանը: Նա հոր հանգամանքով պայմանավորված տխրել է, եղել է մռայլ [illegible] հուսահատ: Նախքան հոր հետ կապված իրավիճակը, Շահանեն իրեն ցույց է տվել [illegible] Հանոբջանյանի նկարը և ասել, որ շատ է սիրում նրան, սակայն վերջինս այդ մասին տեղյակ չի [illegible] հետ կապ չի ունեցել, ուղղակի իր մորեղբոր ընկերն է, տեսել ու սիրահարվել է: Ընթացքում սա [illegible] Գարունն ունի սիրած աղջիկ, իր սերը նրա նկատմամբ միակողմանի է և անպատասխան, բայց Գարունն իրեն պահել է չեզոք: Նրանք հիշյալ կայքում միմյանց ուղարկել են հաղորդագրություններ:

2018թ. մայիսի 25-ին տեղի է ունեցել վերջին զանգը, իսկ հունիսի 4-ին համադասարանցիներ [illegible] մանկավարժական ու ծնողական կոլեկտիվի մասնակցությամբ շրջագայել են, եղել են Գորիս: Շահանեի տրամադրությունը եղել է նորմալ, Գարունի մասով հայտնել է, որ փոփոխություն չկա: [illegible] 4-ին վերադարձել են Գորիս: Հունիսի 6-ին, 11-ին և 14-ին տեղի ունեցած քննություններից ստացել [illegible] գնահատականներ, դժգոհություն չի ունեցել: Քննական շրջանում հաճախակի իրար չեն հանդիպել

հիմնականում շփվել են հեռախոսով: Վերջին 4 ամիսների ընթացքում նկատել ու զգացել է, որ Շահանեի մոտ ի հայտ է եկել բնավորության փոփոխություն, դարձել է դյուրագրգիռ, նյարդային, զայրացկոտ: Հունիսի 14-ի քննությունից հետո հանդիպել են Սայան փողոցում, որտեղ Շահանե Շադունցը հրավիրել է իրենց տուն սրճելու՝ կապված լավ գնահատականներ ստանալու հետ: Նրանց տուն գնալու ճանապարհին զանգ է ստացել մորից, ով պահանջել է վերադառնալ տուն: Հեռախոսն անջատելուց հետո Շահանեն միայնակ վերադարձել է տուն: Ժամը 15-ի սահմաններում խանութ գնալու ճանապարհին Արզումանյան փողոցի վրա տեսել է ընդառաջ եկող Շ.Շադունցին, ով հեռախոսը պահել է ականջին ու պատասխանել զրուցակցին: Շահանեն եղել է հուզված, չի ասել, թե ում հետ է խոսում: Շահանեին ընկերակցելով՝ քայլել են դեպի խաչի ուղղությամբ և նախքան այնտեղ հասնելը՝ Շահանեի հետևից եկել են նրա մայրն ու բարեկամները, կանչել են, որպեսզի կանգառնի: Մտածել է, որ Շահանեի մտքով կրկին անցել է բարձունքից ցած նետվելը, ուստի չի բացառել հարազատների կողմից ևս այդպես կարծելը: Նրա գոտկատեղին նկատել է խոհանոցային դանակ: Հարազատները, հասնելով Շահանեին, բռնել են ուսերից, ձեռքերից ու ստիպողաբար ետ են տարել տուն: Ինքը դրանից հանգստացել է, մտածել է, որ հարազատներն արդեն մոտն են, նման բան չի անի: Այդ օրը Շահանեի հետ չի շփվել, կապի մեջ չի եղել, մտածել է, որ եթե տանն է, ուրեմն ամեն ինչ կարգին է: Հաջորդ օրը՝ հունիսի 15-ին, ժամը 10-ի սահմաններում, գնացել է դպրոց, որտեղ մասնակցել է հերթական քննության համար կատարված կոնսուլտացիային, իսկ ժամը 12-ի սահմաններում, նկատել է դասընկեր Նաիրա Ասատրյանի հուզված ու լացակումած վիճակը: Տանը Մարգարիտան իրեն ասել է, որ Շահանեն կախվելու միջոցով ինքնասպան է եղել: Չգիտի, թե կոնկրետ ինչ պատճառով է նա նման քայլի դիմել: Հնարավոր է միակողմանի և անպատասխան սերը, մոր խստապահանջ լինելը, հոր առողջական վիճակը միասին ազդել են Շահանեի տրամադրության վրա, որից էլ տխրել ու ընկճվել է: Շ.Շադունցի օրագիրը լրացվել է ձեռագիր, կազմին եղել է մեղվի նկար: Շահանե Շադունցը Գարուն Հակոբյանի մասին լրացրած անձնական օրագրում ինքնասպանության դիմելու ցանկության մասին գրառում չի կատարել, ծնողների մասին գրառումներ չեն եղել:

Ժասմին Թանգյանն իր լրացուցիչ ցուցմունքով հայտնել է, որ տեղեկացված է եղել Դերենիկ Ղևոնդյանի ու Շահանեի Շադունցի նամակագրական կապի մասին: Շահանեն ասել է, որ նրա հետ շփվել են անկեղծ ձևով, նրան ընդունում է եղբոր նման: Ընդհանրապես Շահանեն իր անվան հետ կապված ցանկացած խոսակցության նկատմամբ շատ ուշադիր էր և վատ էր տանում նման խոսակցությունները, միշտ ձգտել է օրինակ ծառայել մյուս աղջիկների համար և ձգտել է իր պատվի հետ կապված որևէ խոսակցություն չլինի: Շահանեի ծնողները և բարեկամները ևս ևս նման հարցերում եղել են ուշադիր: Ձգտել են, որ կրենց աղջիկը վատ արարք չգործի: Խաչ գնալու ժամանակ Շահանեն հեռախոսով խոսել է Դերենիկ Ղևոնդյանի հետ: Խաչ գնալու ժամանակ Շահանեն եղել է նեղսրտած, լացակումած: Լսել է, որ նրա զրուցակցին ասել է, որ նա վատ բան չի արել: Չի կարող հստակ ասել, թե կոնկրետ ինչ պատճառով է Շահանեն մտածել, որ իրեն վատ աչքով են նայում, սակայն ենթադրում է, որ դա հնարավոր է կապված է եղել Շահանեի կողմից Դերենիկի հետ գրվելու կամ հեռախոսով շփվելու հետ, որի մասին չի բացառում, որ տեղյակ են եղել Շահանեի տան անդամները, ովքեր միգուցե հաշվի են առել այն հանգամանքը, որ Դերենիկը ամուսնացած է:

2018թ. օգոստոսի 23-ին որպես վկա լրացուցիչ հարցաքննվելու ընթացքում Սիրանուշ Սահակյանը ցուցմունքին կից ներկայացրել է ձեռագիր տեքստ՝ բաղկացած 3 թերթից:

Հիշյալ գրառումների կապակցությամբ Ս.Սահակյանը ցուցմունք է տվել, որ դուստրը՝ Շահանե Շադունցն ունեցել է անձնական օրագիր, որի մեջ կատարել է գրառում՝ 2018թ. հունիսի 14-ի դրությամբ, որտեղ գրել է իր մահանալու ցանկության մասին: Օրագիրը, որից իր քույր Աննան պոկել է [illegible]երթ, գտնվում է իրենց տանը: Բացի այդ, ներկայացրել է նաև Շահանե Շադունցի կողմից գրառված [illegible] օրագիր:

Ս.Սահակյանի ներկայացրած ձեռագիր տեքստային ու թվային գրառումների զննությամբ պարզվել է, որ 1-ին թերթի վրա առկա գրառումը կիսատ է, այն կատարված է 2018թ. մայիսի 21-ից առաջ: Սկսվում է «[illegible] ես քեզ անչափ:...» գրառումով: Հեղինակը գրառել է հոր առողջական վիճակի մասին, կազդուրվելու [illegible], ծխելու հետ կապված իր մտահոգությունների մասին: Նշել է, որ ամսի 23-ին պապի [illegible]

Հարազատները գնացել են Երևան, միայն ինքը չի ուզել գնալ: Հոգնած է, անհավես, անտրամադիր և ամեն ինչից դժգոհ:

Հաջորդիվ գրառված է «21.05.2018թ. ժ. 0[23] ր» թվային գրառումը: Հեղինակը անցումով դեպի հակառակ դարձերես գրել է իր տխուր վիճակի, տրամադրության, ապա նաև մոր կողմից իր հասցեին հնչեցված կանացի անեծքների մասին:

Այնուհետև գրառված է «ժ.0[28]ր»: Հեղինակը գրել է, որ մեկ ամիս կլինի, ինչ օրագիրը չի բացում, կների, մի քանի օրից իր վերջին՝ զանգն է: Կների ժամանակ ու տրամադրություն չունի:

Հաջորդիվ անցումով դեպի 2-րդ թերթ գրառված է «14.2018թ. Վերջին անգամ» բովանդակությամբ գրառումը:

Գարուն Հակոբջանյանը ցուցմունքով հայտնել է, որ հանդիսացել է Շահանե Շադունցի մորեղբոր՝ Գարիկ Սահակյանի ընկերը, բացի այդ, նրանց խանութի մշտական հաճախորդ: Շահանե Շադունցի նկատմամբ երբևէ որևէ զգացմունք չի ունեցել, նրանով չի հետաքրքրվել: Ինքն ունեցել է հավանած աղջիկ: 2018թ. փետրվարին կամ մարտին «www.facebook.com» սոցիալական կայքին փոխկապակցված «Messenger» հավելվածի միջոցով Շահանե Շադունցն իր հետ հաստատել է նամակագրություն և ուղարկել հաղորդագրություններ: Նա գրել է «Շ.Շահանե» և «Anun Anun» անվամբ անհատական էջերի միջոցով: Նաև զանգել է իրեն: Զանգերի և սms հաղորդագրությունների ժամանակ զգացել է, որ նա ջերմորեն է իրեն ընդունում, որպես քեռու ընկեր: Գրածներից հասկացել է, որ Շահանեն շփվում է՝ մտերիմ մարդու հետ կիսվելու համար: Իրեն չեզոք է պահել, առիթ չի տվել, չի սպասել նրա սms-ներին: Վերջին անգամ նամակագրային կապի մեջ եղել ապրիլին: Դրանից հետո նա մի քանի անգամ զանգել է իր 077 60 65 88 հեռախոսահամարին: 2018թ. հունիսի 15-ին՝ ժամը 17-ի սահմաններում, տեղեկացել է, որ Շահանեն տան նկուղում կախվելու եղանակով ինքնասպան է եղել: Չի կարող ասել, թե ինչու է նման քայլի դիմել: Երբևէ Շահանեի գրածները լուրջ չի ընդունել, համոզված է, որ Նրա արածը որևէ կերպ կապված չէ իր անձի հետ, քանի որ իր գործողություններով նրան վատ իրավիճակի մեջ չի դրել, երբևէ նրան չի նեղացրել, նրա հետ լուրջ հարաբերություն չի ունեցել:

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությունից ստացվել է Շահանե Շադունցի օգտագործած 094 37 25 72, Գարուն Հակոբջանյանի օգտագործած 077 60 65 88 հեռախոսահամարների 2018թ. փետրվարի 1-ից մինչև 2018թ-ի հունիսի 16-ն ընկած ժամանակահատվածի ելքային ու մուտքային զանգերի վերծանումները, որոնց թվում նաև՝ բաժանորդային տվյալները, զանգերն սպասարկած աշեհավաք կայանների տեղակայման վայրերի հասցեները:

Քննությամբ և վերծանումների զննությամբ պարզվել է, որ Շահանե Շադունցը «www.facebook.com» սոցիալական կայքի «Շ.Շահանե» անհատական էջին փոխկապակցված «Messenger» հավելվածի միջոցով նամակագրական, իսկ իր օգտագործած 094 37 25 72 հեռախոսահամարով հեռախոսային կապի մեջ է եղել Դերենիկ Արագածի Ղևոնդյանի հետ, զանգել է վերջինիս օգտագործած 043 22 22 11 հռախոսահամարին:

Դերենիկ Ղևոնդյանը ցուցմունքով հայտնել է, որ իր և Շահանե Շադունցի միջև կապը հաստատվել է 2018թ. հունիսի սկզբներին, ընդհանուր նման ձևով շփվել են մոտ 9-10 օր: Ծանոթությունը նախաձեռնությունը եղել է Շահանե Շադունցի կողմից: Նրան չի հանդիպել, միմյանց միջև որևէ հարաբերություն չի եղել: 2018թ. հունիսի 14-ին՝ ժամը 12-ի սահմաններում, Շ.Շահանեի թողած կարճ զանգից հետո զանգել է նրան, խոսակցությունից հասկացել է, որ նա նեղսրտած է, լացակոմած: Ասել է, որ իրեն վատ է զգում, իրեն թվում է, թե շուրջ բոլորը իրեն վատ աչքով են նայում: Ասել է նաև, որ դուրս է եկել, ուզում է մենակ լինել, գնում է դեպի մոտակա խաչը: Հեռախոսն անջատված է, քանի որ ընկել է խաչի ծորը, մոտը հեռախոս չկա: Ավելի ուշ տեսել է, որ Շ.Շադունցը «Շ.Շահանե» անհատական էջի անվանումը փոփոխել և գրառել է «Դերո Ղևոնդյան» տվյալներով, այնուհետև ապաակտիվացրել է այն:

Շահանե Շադունցի դասղեկ Նաիրա Նիկոլայի Ասատրյանը ցուցմունք է տվել, որ Շահանե Շադունցը մոր գիտությամբ հաճախակի է բացակայել դասերից: Շահանե Շադունցի ընտանիքը եղել է սոցիալապես ապահովված: Վերջինս էությամբ եղել է ազատ, համադասարանցիների տարիքակիցների համեմատ ավելի հասուն: Նա նմանվել է ուսանողի, օրիորդի: Դասերի ժամանակ հաճախակի է օգտվել համացանցից, հաճախակի է գտնվել <<Ֆեյսբուք>> սոցիալական կայքում: Եղել է ձգտող, աշխատասեր, նպատակասլաց,

էությամբ պարզ, համոզվող, կարեկից, կենտրոն, կոմպլեքսավորված չէր. ուրախ առիթների ժամանակ բոլորի հետ ուրախանում և պարում էր: Նրա մոտ առկա է եղել բանաստեղծական ոճ, արտասանել է: Դեռևս 2016թ-ին նրա մոտ նկատել է սեռական հասունացում, կոկետություն, իրեն հետևելու և խնամելու ցանկություն և ձգտում: Ասել է, որ ցանկանում է դառնալ իրավաբան: 2018թ. գարնանը, ապրիլի սկզբին, տեղեկացել է, որ Շահանեի հայրը՝ Ալիկ Շադունցը առողջական վատ վիճակի պատճառով ընկել է կոմայի մեջ: Այդ օրերի ընթացքում նա բացակայել է դասերից, իսկ երբ արդեն հաճախել է դասի, շատ է տխրել, եղել է մտահոգ, ասել է, թե երանի հայրը առողջանա: 2018թ. հունիսի 14-ի առավոտյան Շահանե Շադունցը մասնակցել քննության: Հունիսի 15-ին՝ ժամը 12-ի սահմաններում, տեղեկացել է Շահանե Շադունցը ինքնասպանության մասին: Ժասմին Թանգյանը պատմել է, որ հունիսի 14-ին քննությունից հետո Շահանե Շադունցի մայրը զանգել է դստերը ու պահանջել շուտ գնալ տուն: Մայրը եղել է զայրացած: Շահանե Շադունցն իրեն ասել է, որ քեռին՝ Գարիկը, կնոջ հեռախոսի միջոցով Ֆեյսբուքի կամ մեսենջերի [illegible] է Շահանեի նամակագրությունը մի տղայի հետ, այն ցույց է տվել ծնողներին և ըստ երևույթին [illegible] համար է զանգել ու կանչել: Դրանից հետո Շահանեն գնացել է խաչի տարածք, որտեղ ցանկացել է անդունդից նետվել կամ իրեն վնաս տալ դանակով, քանի որ նրա մոտ նկատել է դանակ: Դրանից հետո՝ եկել են մայրը, հորեղբայրը և քեռին ու քաշելով՝ տարել են Շահանեին: Շահանե Շադունցն [illegible] կրկնել է, որ չի կարող այսպես խայտառակ ապրել, ավելի լավ է նամուսով մեռնել: Նկատի է ունե[illegible] ինչ, որ տղայի հետ կապված գաղտնիք է բացվել, ծնողներն իմացել են: Ժասմին Թանգյանը պատմել [illegible], որ դա Շահանեի կողմից 2-րդ փորձն է ինքնասպանության դիմելու ու հիշեցրել է Խաչատրյան [illegible] հետ կապված Շահանեի կողմից Խաչ գնալու հանգամանքի մասին, որի ժամանակ Շահանեն ցան[illegible] հայտնել իրեն ցած նետել անդունդից: Շահանեի օրագրում կարդացել է նաև Գարուն անուն[illegible] նկատմամբ ունեցած անպատասխան սիրո մասին: Նույն օրը, ուշացումով տարբեր խոսակցությ[illegible] տեղեկացել է նաև, որ Շահանեն կապի մեջ է եղել նաև Գորիս քաղաքի բնակիչ Դերո Ղևոնդյանի [illegible]

Շահանե Շադունցի մայրը՝ Սիրանուշ Սահակյանը, ցուցմունք է տվել, որ 2018թ. հուն[illegible] 14-ին առավոտյան ժամերին Շահանեն գնացել է դպրոց հերթական քննության, նրա մոտ ամեն [illegible] նորմալ: Նույն օրը՝ ժամը 11-ի սահմաններում, Շահանե Վարդազարյանն ասել է, որ իր բջջային հե[illegible] Շահանե Շադունցը մտել է <<Ֆեյսբուք>>, որի միջոցով գրվել է Դերենիկ Ղևոնդյանի հետ. [illegible] գալուց հետո էջը չի փակվել ու ինքը տեսել է Շահանեի ու Դերոյի հաղորդագրությունները: [illegible] դրանք՝ հասկացել է, որ դուստրն ու Դերենիկը իրար հետ գրվել են սիրահարական թեմաներով, [illegible] ինքը տեղյակ չի եղել: Դրանից հետո ժամը 12-ից 12:30-ի սահմաններում զանգել է Շահանեին ու [illegible] ձևով կանչել է իր մոտ: Շահանեի հարցին պատասխանել է, թե ինչ կապ է ունեցել Դերենիկ[illegible] հետ: Շահանե Շադունցն իր ասածից ազդվել է: Քիչ անց նա գնացել է խանութ, որտեղ դստերը [illegible] ասել է, թե ինչու է կապնվել ամուսնացած բաժանված հետո ամուսնացած, 30 տարեկան մի[illegible] հետ, ինչու է իր արածը <<լցնում ջուրը>>: Նա լիրբ չէ, իրեն ում տեղն է դրել ու տվել է շրջապատ[illegible] այնպիսի կանանց անուններ, որոնք եղել են ուրիշների փրուտիները ու նրանց աղջիկներն էլ [illegible] ճանապարհն են բռնել: Շահանեն ոչինչ չի խոսել, գլուխը կախ լսել է: Մի պահ Շահանեն անհ[illegible] եկել խանութից, կից սենյակից իր հետ վերցնելով ամենօրյա օգտագործվող դանակը ու գնա[illegible] ուղղությամբ: Մտածել է, որ նա գնացել է տուն, սակայն տանը չի եղել: Մտածել է, որ գնաց[illegible] տարածք, որի պատճառով Գարիկ Սահակյանի և ամուսնու եղբոր՝ Արման Շադունցի հետ [illegible] այնտեղ: Քիչ հեռվից տեսել է, որ խաչի վերևի մասում Շահանեն կանգնած է Ժասմինի մոտ ու [illegible] խոսում է: Դուստրը, տեսնելով իրեն, հեռախոսը նետել է ձորի ուղղությամբ: Շահանեն ասել է, [illegible] Դերենիկի հետ: Նրան ստիպողաբար ետ են բերել խանութ, կրկին ասել են, թե ինչ բանի վրա է, է, որ նրա հետ է գրվում, նա պետք է նորմալ տղաների հետ շփվի, տարիքակից, խելացի տղան[illegible] աղջիկ է: Շահանեն ասել է, որ ներեն, սխալվել է, չի շփվի դերենիկ Ղևոնդյանի հետ: Դրա[illegible] Շահանե Շադունցը գնացել է տուն, օրվա ընթացքում այցելել է խանութ: Ժամը 23-ի սահ[illegible] Շահանե Շադունցը եղել է քնած: Հաջորդ օրը Շահանեի վրա այդ թեմայով չի խոսել, նրա վրա չի[illegible] Չի մտածել, որ նա կարող է դիմել ինքնասպանության: Իրականում նա ազդվել էր իրենց խոսքից, է, որ ճիշտ ուղու վրա չէ, մտահոգվել է ամուսնացած ու տարիքով տղամարդու հետ շփվելու հետ[illegible] բացահայտումից: Մտածում է, որ Շահանեն դիմել է ինքնասպանության՝ կապված նրա [illegible] Դե[illegible]

եղած նամակագրական կապը բացահայտվելուց հետո, որպիսի հանգամանքից նա ազդվել է, մտածել է, որ իր անունը դրանով խայտառակվում է, քանի որ այդ մասին տեղեկացել են հարազատները:

Նկատի ունենալով, որ անչափահաս Շահանե Շադունցի հոգեկան զարգացման մակարդակը, ինքնասպանություն կատարելը, ժամանակ հոգեբանական առանձնահատկությունները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցերը պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 243-245-րդ, 247 և 248-րդ հոդվածներով,

որոշեցի՝

1. Վարույթում քննվող թիվ 32101218 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի մասնագետներին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1) Ի՞նչ հոգեվիճակում է գտնվել Շահանե Շադունցն ինքնասպանության գործելու նախորդող ժամանակահատվածում:

2) Ի՞նչ հոգեբանական առանձնահատկություններ է ունեցել Շահանե Շադունցը:

3) Ինքնասպանություն գործելու ժամանակ Շահանե Շադունցն ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել, որ անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա, որը կարող էր հանգեցնել ինքնասպանության:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այնպիսի հարցերի, որոնք թեև սույն որոշման մեջ առաջադրված չեն, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբան-փորձագետի իրավասության մեջ և որոնց ապացուցումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. Փորձագետներին տրամադրել թիվ 32101218 քրեական գործը՝ դրա հետ պահվող օրագրերով, Շ.Շադունցի ամբուլատոր քարտը:

4. Խնդրել բժշկական համալսարանի պրոռեկտորին՝ պարզաբանել փորձագետներին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետներին նախազգուշացնել նաև՝ նախնական քննության տվյալներն առանց քննիչի թույլտվության չհրապարակելու պարտականության մասին: Միաժամանակ նախազգուշացնել փորձաքննություն կատարելու համար նրանց տրամադրված քրեական գործի նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության
ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական Ս.Արզումանյան